

8.	ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ECONOMICS ЭКОНОМИКА
-----------	--

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ XX ԴԱՐՈՒՄ

Ս. Գ. ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

*Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ,
Գավառի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի դեկան*

Տնտեսագիտությունը, ինչպես և մյուս գիտությունները, շարունակական զարգացման հատկանիշ ունեն։ Դա հատկապես տեսանելի է երկրորդ համաշխարհային պատերազմին հաջորդող տասնամյակներում, ինչն ավելի մեծ նշանակություն է ձեռք բերել։ Այդ շրջանում և այսօր էլ պետությունը դարձել է տնտեսական կյանքի բոլոր ոլորտների կարգավորման գործընթացների ակտիվ մասնակիցը։ Սա մի հանգամանք է, որը չէր կարող դուրս մնալ տնտեսագիտության տեսության ուշադրության շրջանակներից։ Դրա մասին է վկայում այն փաստը, որ այդ հանգամանքն առավել խորությամբ քննարկվում էր հատկապես արևմտյան տնտեսագիտական մտքի հիմնական ուղղությունների ներկայացուցիչների կողմից։

Հետպատերազմյան ժամանակաշրջանում՝ ընդհուպ մինչև 80-ական թվականները, տնտեսագիտության տեսությունը Արևմտյան Եվրոպայում և ԱՄՆ-ում ուներ ավելի շատ սոցիալական բովանդակություն, քանի որ քննարկվող հիմնախնդիրները և դրանց արդյունքներով հիմնավորված հայացքների համակարգերը կարևորում էին շուկայական մեխանիզմի ու մասնավոր սեփականության վրա հիմնված և պետական կարգավորման միջոցառումներով զարգացող խառը տնտեսական համակարգի գոյությունը¹։

Այնուամենայնիվ սխալ կլինի եզրակացնել, թե արևմտյան բոլոր տնտեսագետների համար դա առանց հակասարություններ պարունակող ընդհանուր գաղափար էր։ Նրանցից ոմանք շարունակում էին մնալ տնտեսական համակարգի շուկայական կարգավորման աննահանջ կողմնակիցներ և պաշտպանում էին տնտեսության պետական կարգավորման խիստ սահմանափակման դիրքորոշումը, իսկ մյուսներն էլ հանդես էին գալիս պետության տնտեսական դերի ուժեղացման դիրքերից, որն անվանում էին պետական ինտերվենցիա։

Տարբեր մոտեցումներ էին ձևավորվել նաև առաջին խումբը ներկայացնող

¹ Мировая экономическая мысль, т. 5, кн. 1, М., 2004, с. 328.

տնտեսագետների շրջանում՝ հատկապես տնտեսության մասնավոր և պետական հատվածների զուգակցման հիմնախնդիրների հետ կապված:

Տնտեսական կյանքի կարգավորման հիմնախնդիրների քննարկումները ընթանում էին մեթոդաբանական, սոցիալական, տեսական քննական գործիքակազմի, ինչպես և գործնական առաջարկների առանձնահատկությունների տարբերություններով: Այդ իրողությունն ընդունելով որպես հիմք, ընդհանուր տնտեսագիտությունը, ի մի բերելով ստացված արդյունքները, ժամանակակից տնտեսագիտության մեջ առանձնացնում է մի քանի հիմնական ուղղություններ:

Որպես առաջին հիմնական ուղղություն առանձնանում է նորդասական տնտեսագիտությունը, որի ակունքները գտնվում են Լ.Վալրասի, Ալֆ. Մարշալի և ընդհանրապես XIX դարի վերջերին՝ սահմանային տեսության տեսաբանների աշխատություններում: Մեթոդաբանության տեսանկյունից նորդասական ուղղությունը պաշտպանում է անհատականության և ազատ կամ կատարյալ մրցակցության սկզբունքները: Ըստ այդ ուղղության մեթոդաբանության՝ հենց սպառողի կամ արտադրողի անհատական գործողությունների հետևանքով են ձևավորվում որևէ առանձին արդյունքի կամ ռեսուրսի օգտակարության գնահատումը, տարբեր տեսակի նախապատվությունների առաջացումը և դրանց հիման վրա՝ վարքագիծը: Այս ամենը համարելով իրենց տեսության առաջնային տարրեր, նոր դասական տեսության ներկայացուցիչները գտնում էին և հիմա էլ գտնում են, որ ազատ կամ կատարյալ մրցակցության վերը նշված տարրերը վերափոխում են իրական շուկայական գները և եկամուտները, որոնք, իրենց հերթին, տնտեսավարող սուբյեկտների համար դառնում են տնտեսական ճիշտ որոշումներ ընդունելու հիմնավոր պայմաններ:

Այս դատողությունների հիման վրա կատարվում է հետևություն, որ նորդասական տեսության կողմնակիցներին, ընդհանուր առմամբ, կարելի է համարել «ձեռնարկատիրության ազատություն» գաղափարի առավել հետևողական ջատագովներ: Իհարկե, քիչ չեն նաև այլ ուղղություններին հարող տնտեսագետները, որոնք նույնպես պաշտպանում են ձեռնարկատիրության ազատության գաղափարը և այստեղ կարելի է նշել մոնետարիզմի ներկայացուցիչներին՝ ի դեմս նրա անառարկելի առաջնորդ Մ. Ֆրիդմենի, առաջարկի տնտեսագիտական տեսության ներկայացուցիչներից Մ. Ֆլեդստայնին և Ա. Լաֆերին, ռացիոնալ սպասումների տեսության հիմնադիրներ Ռ. Լուկասին և Ջ. Մուտին և այլոց, ովքեր գտնում են, որ շուկան ունի ներքին ուժեղ մեխանիզմ՝ կայուն, հավասարակշռված, զարգացող տնտեսություն ապահովելու համար, հետևաբար պետության էական աջակցության կարիք չկա: Դրա հետ մեկտեղ, ըստ նորդասականների, եթե պետությունն իրականացնում է խիստ կայուն հակաինֆլյացիոն քաղաքականություն, այսինքն, կիրառում է դրամավարկային և բյուջետային զսպող միջոցառումներ, ապա շուկան ինքն է լուծում առաջացող հիմնախնդիրները՝ առանց պետության միջամտության:

Նորդասականների մշակած մի շարք հայացքներ որոշ երկրների կառավարությունների կողմից արժանացան լայն ճանաչման և նրանց այն գաղափարները, որոնք վերաբերում էին ինֆլյացիայի դեմ գործող միջոցառումներին, ունեցան նաև գործնական կիրառում: Օրինակ, ԱՄՆ-ում, Անգլիայում, Չիլիում XX դարի 70-80-ականներին կառավարությունները կիրառեցին սոցիալական ոլոր-

տի բյուջետային ֆինանսավորման միջոցների կրճատման, տնտեսության պետական հատվածի աջակցման քաղաքականություն: Դեռ ավելին, այնպիսի հայտնի տնտեսագետներ, ինչպիսիք են Մ. Ֆրիդմենը, Ա. Լաֆերը և ուրիշներ, դարձան Մ. Թեթչերի, Ռ. Ռեյգանի աշխատակազմերի անդամներ ու խորհրդականներ:

Եվրոպայի զարգացած երկրներում, և հատկապես Արևմտյան Գերմանիայում, XX դարի նույն ժամանակահատվածում առավել ընդունված տնտեսագիտական ուղղություն էր նեոլիբերալիզմը (նորազատական տեսությունը), որի ներկայացուցիչները, սկզբունքորեն ընդունելով նորդասականների գաղափարներից շատերը, այդուհանդերձ ունեին էական դիտողություններ շուկա-պետություն փոխհարաբերության խնդրի շուրջ: Այսպես, նրանք, ինչպես և նոր դասականները, գտնում էին, որ պետության ազդեցությունից ազատ շուկան ժամանակակից տնտեսական համակարգերի համար լավագույն հիմքն է: Այս ընդհանուր դատողության հետ կապված նորազատական տեսության ներկայացուցիչներ Վ. Օլբենը, Լ. Էրհարդը, Ա. Մյուլեր-Արմակը նշում էին մի շարք էական առանձնահատկություններ²: Ամենից առաջ նրանք համաձայն չէին նորդասական այն տեսակետին, որ շուկան ծագել ու զարգացել է առանց պետության որևէ մասնակցության: Ըստ նրանց՝ շուկան կարող էր առաջանալ և զարգանալ համապատասխան ինստիտուցիոնալ միջավայրի առկայության դեպքում, որը նպատակադրված կարգով կարող էր ձևավորել միայն պետությունը: Շուկայական հարաբերությունների համակարգվածության որոշ աստիճանում արդեն պետությունը կարող է տնտեսական կարգավորման բազմաթիվ խնդիրների լուծումը վերապահել շուկային: Դա շուկայի զարգացման այն աստիճանն է, երբ շուկան ինքն է ապահովում շուկայական մեխանիզմների և դրանց գործողության վերարտադրության պայմաններ:

Երկրորդ բացառությունը նորազատական տեսության հետազոտություններում՝ պետության հակամոնոպոլիստական քաղաքականությանը աջակցելն է, և քանի որ քննարկումները կատարվում էին Գերմանիայի տնտեսության իրական երևույթների հիման վրա, ապա հետևությունը այն էր, որ նման քաղաքականությունը հատկապես պետք է ուղղված լինի ներքին շուկայում տեղի ունեցող կարտելացման երևույթների դեմ:

Հաջորդ առանձնահատկությունն ակտիվ սոցիալական քաղաքականության կիրառման գաղափարն է, որը նորդասականների աշխատություններում մնում է ստվերում: Նորազատական ուղղության կողմնակիցները գտնում են, որ եկամուտների շուկայական բաշխումը արդարացի կատարվում է միայն տնտեսապես ակտիվ անհատների համար, ովքեր ունեն լիարժեք և արդյունավետ տնտեսական վարքագիծ: Իսկ ինչ վերաբերում է «խոցելի» սոցիալական խմբերին՝ թոշակառուներ, հաշմանդամներ, ծերեր և ուրիշները, ապա նրանց եկամուտներով պետք է ապահովի պետությունը:

Գերմանական նորազատական տեսությունը առաջարկում է «համընդհանուր բարեկեցության պետության» շատ յուրահատուկ, ինքնատիպ նախագիծ, որը խթանում է կենսունակ և ավյուճով օժտված տնտեսավարող սուբյեկտներին

² *Худокормов А. Г.* Экономическая теория: новейшие течения запада, М., 2009, с. 53.

ծեռք բերել մեծ եկամուտներ շուկայական մրցակցության պայմաններում, և հարկեր վճարելով օգնել պետությանը լուծելու սոցիալական խնդիրներ: Ըստ էության դա վկայում է, որ գերմանական նորազատական տեսությունը միջանկյալ դիրք է գրավում նորդասական և քեյնսյան տեսությունների միջև:

Ինչ վերաբերում է քեյնսյան տեսական ուղղությանը, ապա դա գտնում էր, որ շուկայական տնտեսության գլխավոր թերությունն արդյունավետ պահանջարկ ապահովելու անկարողությունն է: Այդ խնդիրը լուծելու համար, ինչպես նշում են քեյնսականները, անհրաժեշտ է մեծացնել պետական ծախսերը բյուջեի ծախսերի կառուցվածքում՝ միաժամանակ կիրառելով ակտիվ դրամավարկային քաղաքականություն:

XX դարի 50-ականներին քեյնսականության կողմնակիցների բանակը տրոհվեց երկու ոչ հավասար մասերի: Հիմնական խումբը ներկայացնում են, այսպես ասած, քեյնսյան հայացքների խիստ հետևողական տնտեսագետները՝ Է. Հանսենը, Ջ. Հիքսը, Պ. Սամուելսոնը և ուրիշներ, ովքեր իրենց ջանքերն ուղղեցին քեյնսյան մակրոտեսության հայացքները դասական միկրոտեսության հայացքների հետ միավորվելուն: Նրանց հետազոտությունների արդյունքը ժամանակակից տնտեսագիտությունը որակեց որպես «նորդասական սինթեզ»³, ըստ որի մակրո համամասնությունների կարգավորման պետական ակտիվ քաղաքականությունը պետք է զուգակցվեր միկրոմակարդակում մասնավոր նախաձեռնությունների առավելագույն իրականացման հետ: Պետք է փաստել, որ XX դարի երկրորդ կեսերից քեյնսականության նշված ուղղությունը արևմտյան տնտեսագիտության կողմից առավել ընդունված տեսությունն էր, որի առաջարկները ընդունվեցին ԱՄՆ-ի 60-ական թվականների կառավարությունների կողմից՝ արագ տնտեսական աճ ձեռք բերելու համար:

Քեյնսականության մյուս ուղղության կողմնակիցների թիվը մեծ չէ, բայց ընդգրկում է հեղինակավոր տնտեսագետների, օրինակ, Ջ. Ռուբինսոն, Պ. Սրաֆա, Ն. Կալդոր, Ռ. Կան: Այս ուղղության ժառանգական հատկանիշը սահմանային տեսության դրույթների մերժումն է, քանի որ նրանք ուղղակի քննադատում էին ժամանակակից տնտեսագիտության հիմքը կազմող սահմանային օգտակարության և սահմանային արտադրողականության տեսությունները: Նրանք, հատկապես Պ. Սրաֆան, ձգտում էին Դ. Ռիկարդոյի գնի տեսության հիման վրա մշակել նյութական ուղղակի ծախսերի վրա հիմնված արժեքի և գնի նոր տեսություն:

Մակրոտնտեսական մակարդակի քննարկումներում հետքեյնսյան այս ուղղությունը պաշտպանում էր ամբողջական պահանջարկի խթանման գաղափարը՝ ապառքողական ծախսերը մեծացնելու միջոցով: Դրա համար նրանք կարևոր նշանակություն էին տալիս աշխատավարձի բարձրացմանն ուղղված միջոցառումներին՝ որպես արդյունավետ պահանջարկի ընդլայնման գործոնի: Բացի դրանից, նրանք կողմ էին նաև մոնոպոլիաների իշխանության սահմանափակման և սոցիալական ռեֆորմների քաղաքականություններ կիրառելուն: Դա էր պատճառը, որ հետքեյնսյան այս ուղղությունը տնտեսագիտական հետազոտություններում անվանեցին «ծախ քեյնսականություն»: Ըստ էության, նրանց կողմից առաջարկված ծրագրերն առավել լրիվ իրագործվեցին «սկանդինավյան մո-

³ *Худокормов А. Г.* Экономическая теория: новейшие течения запада, М., 2009, с. 39.

դելի» շրջանակներում: Այդ մոդելը ավելի շատ հենվում է շվեդական դպրոցի սեփական մշակումների վրա, քան թե ամերիկյան կամ անգլիական մորքեյնսականության ներկայացուցիչների գաղափարների վրա: Ըստ շվեդական դպրոցի, մակրոմակարդակով տնտեսության զարգացումն ավելի շատ պետք է հենվի պետության աջակցության վրա և ոչ թե ազատ շուկայական մրցակցության մեխանիզմի վրա:

Ժամանակակից տնտեսագիտության «ծախ» ուղղվածությունն ունեցող տեսություններից է նաև ինստիտուցիոնալ-սոցիոլոգիական ուղղությունը⁴, որի ծագումնաբանությունը բավականին բարդ բնույթ ունի: Այն ձևավորվել է XIX դարի վերջերին, և ժամանակակից ինստիտուցիոնալիստները փաստորեն Թ. Վեբլենի և Զ. Կոմոնսի գաղափարական հետևորդներն են, քանի որ հանդես են գալիս մասնակի ազգայնացման, տնտեսության պետական կարգավորման այնպիսի մեթոդների կիրառման առաջարկներով, որոնք պետք է համատեղելի լինեն ժամանակակից տնտեսության հիմք հանդիսացող շուկայի և մասնավոր սեփականության գաղափարների հետ:

Այսպիսով, XX դարի կեսերին տնտեսագիտության տեսության հիմնական ուղղություններն ըստ իրենց հետևությունների և կատարած առաջարկությունների կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.

ա) տիրապետող դիրք ունեցող քեյնսականություն, որի դրույթներին առավել շատ հետևել են հիմնականում ԱՄՆ-ը և Անգլիան,

բ) քեյնսականության նկատմամբ «չափավոր» ըդդիմություն ներկայացնող գերմանական մորազատականների տեսությունը և ավելի «հարձակողական» ըդդիմություն ցուցաբերող ամերիկյան մորդասական տեսությունը, որի կողմանկիցներն ակտիվ կերպով քարոզում էին ձեռնարկատիրական ազատության և տնտեսական կյանքին պետության չմիջամտելու դիրքորոշումները,

գ) ինստիտուցիոնալ-սոցիոլոգիական ուղղություն, ըստ որի տնտեսության պետական կարգավորումը պետք է ընդունի նպատակադրված սոցիալական քաղաքականության բնույթ:

XX դարի 70-ական թվականներին զարգացած երկրներում, որպես կանոն, հաճախ կիրառվել են նշված ուղղությունների որոշ գաղափարների սինթեզ ներկայացնող տնտեսական քաղաքականություններ, որոնք առանձին ժամանակահատվածներում ապահովեցին տնտեսական աճ և բարեկեցության բարձրացում, իսկ արդեն XX դարի վերջերին նկատվեց անկում:

ОСНОВНЫЕ НАПРАВЛЕНИЯ РАЗВИТИЯ ЭКОНОМИЧЕСКОЙ ТЕОРИИ В 20 ВЕКЕ

С. Г. Амирханян

Работа посвящена рассмотрению основных направлений развития экономической теории в 20 веке. С середины XX века и вплоть до восьмидесятых годов западная экономическая наука больше всего рассматривала задачи социального характера для обоснования существования развивающейся экономической ситуации с помощью рыночных и государственных регулирующих мероприятий.

⁴ Мировая экономическая мысль, т. 5, кн. 2, М., 2004, с. 446.

На основе сделанных выводов и предложений выведены основные течения экономической науки второй половины XX века.

THE MAIN DIRECTIONS OF ECONOMIC THEORY OF THE XX CENTURY

S. G. Amirkhanyan

Since the midst of the XX century up to the 80ies the western economic science paid more attention to the issue of social nature in order to ground the existence of developing economic situation with the help of market and governmental regulating measures. The main directions and trends of economic science of the second half of the XX century are pointed out and a set of conclusions and suggestions are made in the given paper.

ՊԵՏԱԿԱՆ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ: ՀՀ 2012-2014 ԹԹ. ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Ս. Գ. ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

*Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ,
ԳԴՀ պրոֆեսոր*

Ն. Դ. ՕՂԱՆՅԱՆ

ԳԴՀ տնտեսագիտական ֆակուլտետի ուսանող

Ինչպես աշխարհի բոլոր մյուս պետություններում, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում պետական բյուջեի նախագիծը մշակվում է մեկ տարվա կտրվածքով, սակայն միայն պետության կողմից կատարվող ծախսերի նման կարճաժամկետ պլանավորմամբ հնարավոր չէ ապահովել երկրի տնտեսության դինամիկ զարգացում և կայուն տնտեսական աճ: Որպես այս հարցի լուծում՝ միջազգային ասպարեզում արդեն երկար տարիներ շարունակ պետություններն իրենց ծախսային քաղաքականության մեջ լայնորեն կիրառում են ծրագրային բյուջետավորումն ու պետական միջնաժամկետ ծախսային ծրագրերը:

«Ծրագրային բյուջետավորում» հասկացությունն առաջ է եկել 1950-60-ական թթ. ԱՄՆ-ում: Բյուջետային համակարգի վերաբերյալ այս նոր մոտեցումն, իհարկե, չէր ենթադրում ծախսերի բովանդակության կամ պետական քաղաքականության փոփոխություն, բայց, այնուամենայնիվ, պահանջում էր արմատական բարեփոխումներ պետական ֆինանսների կառավարման բնագավառում:

Առաջին անգամ այն կիրառվեց Նոր Զելանդիայում և մեծ հաջողություն ունեցավ: Այնուհետև բյուջետային ծախսերի դասակարգման այս եղանակն արագ տարածում գտավ նաև մի շարք այլ երկրներում: Այսօր այն կիրառվում է աշխարհի գրեթե բոլոր զարգացած երկրներում և զարգացող երկրների մեծ մասում, սակայն համաշխարհային պրակտիկայում այդ գործում բարձր է գնահատվում